Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-062[2]-11.07.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ.

«Պարտապանի գույքի վրա արգելանք դնելուց կամ սահմանափակում կիրառելուց հետո անհապաղ այդ մասին ծանուցում է ուղարկվում անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, իսկ դրա բացակայության դեպքում՝ անձի համաձայնությամբ՝ վերջինիս մատնանշած էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հեռախոսին կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 1-ին:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-062[2]-11.07.2017-ՊԻՄԻ-011/1 օրենքի նախագծում կատարված փոփոխությունների և լրացումների

Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

Կ-062[2]-11.07.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ.

«Պարտապանի գույքի վրա արգելանք դնելուց կամ սահմանափակում կիրառելուց հետո անհապաղ այդ մասին ծանուցում է ուղարկվում անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, իսկ դրա բացակայության դեպքում՝ անձի համաձայնությամբ՝ վերջինիս մատնանշած էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հեռախոսին կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 1-ին:

Deleted: պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	
1.	Աժ պատգամավոր Արփինե Հովհաննիսյան	«Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության	Առաջարկվում է նախագծերով օրենքների ուժի մեջ մտնելը երկարաձգել ևս մեկ ամսով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագծերը լրամշակվել են, սահմանվել է, որ օրենքներն ուժի մեջ են մտնում 2018 թվականի ապրիլի 1-ին:	Ընդունվել է նախագծերի լրամշակված տարբերակը:

		վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր:			
2.	«Ելք» խմբակցություն	«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (Կ-062) ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 2, 1-ին մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով» բառերը, քանի որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով չեն կարող սահմանվել իրավունքներ և պարտականություններ, դրանք կարող են միայն Օրենսդրի վերապահմամբ իրականացվել: «Օրենքով սահմանված կարգով» եզրույթն ամբողջությամբ արտահայտում է նպատակը:	Չի ընդունվել: Ենթաօրենսդրական նորմատիվ ակտով կարող են սահմանվել իրավունքներ և պարտականություններ, եթե դա սահմանելն օրենքով վերապահվել է նման ակտ ընդունելու իրավասություն ունեցող պետական մարմնի:	Առաջարկը չի ընդունվել
3.	«Ելք» խմբակցություն	«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (Կ-062) ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 2, 1-ին մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել 2-րդ պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ Տեղեկատվությունը պետք է կազմված լինի «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:	Չի ընդունվել, ծանուցման վրա էլ. ստորագրություն դնելու անհրաժեշտությունը բացակայում է:	Առաջարկը չի ընդունվել
4.	«Ելք» խմբակցություն	«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել 3-րդ պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ Անձը կարող է հաղորդակցվել, իրականացնել իր ընթացակարգային	Չի ընդունվել, նախագծերի փաթեթի կարգավորման առարկան ծանուցում իրականացնել է, այլ ոչ թե ծանուցվողի և ծանուցողի միջև	Առաջարկը չի ընդունվել

		փոփոխություն կատարելու մասին» (Կ-062) ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 2, 1-ին մաս	(դատավարական) իրավունքներն ու պարտականությունները պաշտոնական էլեկտրոնային փոստի այն հասցեով, որից ստացել է ծանուցումը:	փաստաթղթաշրջանառության իրականացումը:	
5.	«Ելք» խմբակցություն	«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (Կ-062) ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 3	Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ **Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունիսի 1-ից	Ընդունվել է մասնակի, սահմանվել է, որ օրենքներն ուժի մեջ են մտնում 2018 թվականի ապրիլի 1-ին:	Ընդունվել է նախագծերի լրամշակված տարբերակը: